

Այս հատուածի մէջ այսքանս միայն նկատելի է, որ Աղուանից պատմիչը յունական բաժնի Յովհան Գ. կաթողիկոսին Մովսէս Բ. Եղիվարդեցի կաթողիկոսի ժամանակն է դնում: Իսկ Գիւրք թղթոցի մէջ ինչպէս և մեր միւս պատմագրաց մէջ Յովհանը Աբրահամ կաթողիկոսի ժամանակն է հակաթոռ նստել:

Սոյն հատուածից Օրբելեանի քաղուածքն է՝

«Այս մինչ աղմուկ լինէր ի մէջ աշխարհիս, և Յովհան ոմն ի բաժին Յունաց հակառակթոռ էր նստեալ, և վասն ինն դասուցն ի Յունաց խնդիր առ Հայս, և Աուրիոն Այսաց կաթողիկոս վասն փառամոլ ախտի ի բաց եկաց ի Հայոց և քաղկեդոնիկ եղև: Այնուհետև բաժանեալ ի բաց եկաց և Աղուանիցն պատճառելով և նա պատճառս ինչ»:

(Շարունակելի)

ԴՍ. Վ.



ՊԼՏՄՈՒԹԻՒՆ, ՍԼՍԸՆԵԱՆ ՏԵՐՈՒԹԵԱՆ.

Թ. ՆՇՕՂԴԷԶԻ.

(Շարունակութիւն)

Դստրով Բ, որի մականունն է Պարուէզ (Ապրուէզ), Յաղթական, զուր քանաց Վահրամիս իւր կողմը քաշելու, Սա կամենում էր ինքն իշխել յանուն մի անչափահաս արքայորդու և կամ աւելի ևս յանուն իւր, Խոսրովը նրա դիմացն ելաւ, սակայն նրա զօրքն էլ հաւատարիմ չմնաց իրեն, Անուանի զօրավարն աւելի յարգանք էր պղղում քան թէ անարի արքան, ուստի և թողին նրան հէնց առաջին լուրջ ճակատամարտից յետոյ, Խոսրովը փախաւ իւր ընտանիքով և մի քանի հաւատարիմներով Ասորիք հոռոմներին մօտ, Սահմանագլխի Կիրկեսիում (Circesium), քաղաքը հասնելով՝ նա մի աղեքսական անձակ գրեց և օգնութիւն խնդրեց Մորիկ կայսրից (Mauricius, իշխում էր սկսած 14 օգ. 582 թ.), Սա ճարպիկ չեղաւ այս անսովոր բարեկամող հանգամանքներից իւր տէրութեան համար օգտուելու: Մորիկը յանձն առաւ Խոսրովին յետ տանելու և իւր գահի վրայ բազմեցնելու առանց իւր համար մի դահացուցիչ վարձ ապահովելու, Ինչպէս հասարակ

ծագումից առաջ եկած մի մարդ՝ հաւանօրէն նա արգէն իսկ շողորորթուած էր համարում իրեն, որ կարող է հնադոյն արքունի ցեղի մի շառաւիղ՝ օրինական թագաւորի կրկին իւր գահի վրայ նստեցնել և իրեն նրա «հայր» հրատարակել, Վահրամն այդ միջոցին քիչ տատանումից յետոյ ինքն իրեն արքայ էր հրատարակել տուել և իւր անուանով զբաւմենք կտրել, նա կարողացել էր Բինդոյէին իւր ձեռքը ձգել, Սակայն Վահրամի գահը տատանուում էր հէնց սկզբից, Մեծամեծները նրան իբրև իրենց հաւասարի չէին հնազանդում, Մինչև իսկ պարթևական իշխանութեան մէջ, ինչքան էլ շուտ շուտ թագաւորներին գահաժեժ էին անում և թագաւորներ էին նստացնում, միշտ աչքի առաջ էին ունենում, որ միայն արշակունի լինի թագ կրողը, այսպիսի օրինապահական տեսակետ աւելի ևս զօրաւոր էր Սասանեանց ժամանակ, Ժողովրդական հասկացողութեամբ «յն արքայական վեհափառութիւնը» (Ֆառոհաշի Կայանիկ) կապուած էր Արտաշրի տան հետ և այլ ոք կարող չէր երբէք թագաւոր լինել, Նոյն իսկ Տիգրանում մի ապստամբութիւն ծագեց, որ Վահրամը թէպէտ և ընկճեց, որի միջոցին սակայն Բինդոյէն փախաւ յօգուտ իւր քեռորդու աշխատելու, Արգէն 591 թուի սկզբին մի կայսերական բանակ յառաջ էր անցել, Խոսրովին կրկին գահի վրայ նստեցնելու համար, Մարտիրոսոպոլիսը (Նիքիերտ), որ քիչ առաջ դաւաճանութեամբ պարսիկներին ձեռն էր ընկել և արգէն բաւական երկար ժամանակ պաշարուած էր, թող տուաւ Խոսրով հոռոմներին յանձնելու, նոյնպէս և Դարան, Մժքնի մօտ պարսիկ բանակը միացաւ արդ Խոսրովի հետ, Ամենայն օր գալիս և միանում էին նրա հետ պարսիկ մեծամեծներ և զբանց թուում և հայ նախարարներ, Այլ գնդեր էլ գալիս և յարում էին օրինաւոր թագաւորին: Աղբրէջանում (Ատրպատական) Վըստամը մի բանակ ժողովեց Վահրամի ընդդէմ, Հոռոմ—պարսկական զլխաւոր զօրաբանակը Տիգրիսի ձախ ափով նրա առաջն էր ընկնանում, Բայց գեռ մինչև բանակների ընդհարումն մի արքունի նախադարձակ խուճր Միջագետքի անապատով ուղիղ ճանապարհով հասել և զբաւել էր Սելևկիա, Տիգրոն և Դոր—Անտիոք մայրաքաղաքները, Ամէնքն էլ օրինաւոր թագաւորին էին յարում: Եւ վճռական ճակատամարտում Զարի շրջակայքում Վահրամը կոր ի գլուխ ջարդուեցաւ (591 ամառը), նա փախաւ թիւրքերի մօտ, որոնք նրան պատուով ընդունեցին, բայց ուր քիչ ժամանակ յետոյ սպանուեցաւ, Հոռոմները Խոսրովին Տիգրոն տարին, Հոռոմների և պարսիկների մինչև այդ խաղաղութիւնն ինքն ըստ

ինքեան հասկանալի էր: Հարկաւ հարկատուութիւնը գաղարեց, սակայն սահմանները մնացին նոյնը ինչպէս էին կուռից առաջ, մանաւանդ նշանաւոր է այն, որ Վերինը պարսիկներին թողնուեցաւ:

Բայց Խոսրովը դեռ իրեն այնքան տկար էր զգում, որ կայսրից 1000 հոգում զինուոր խնդրեց իրեն թիկնապահ, նրա առաջին մտադրութիւնն էր բոլոր փոանգաւոր մարզկանցից ազատուել, մանաւանդ նրանցից, որոնք իւր հօրը գահալքէժ էին արել և իրեն գահ բարձրացրել: Այսպէս սպանել տուաւ իւր քեռի Բինգոյէին: Բայց սրա եղբայր Աստամին չկարողացաւ ձեռք ձգել: Սա տեսնելով որ իւր մահը վճռուած է, Վահրամի օրինակին հետեւեց և Վարաստանում թաղաւորի տիտղոս առաւ և իւր անունով զբաւներ կտրեց: Սա էլ հնազոյն ցեղից էր: սակայն չկարողացաւ օրինաւորութեան հեղինակութիւն ստանալ: Ինչպէս երևում է, նա Վահրամի զօրքերի մնացորդների վրայ յենուեցաւ և միաբանեց թիւրքերի և դէլամիտների հետ: Գրեթէ վեց տարի շարունակ ընդդիմացաւ նա Խոսրովի գնդերին և միայն գաւաճանութեամբ ընկաւ (հաւանօրէն 595-ի վերջին կամ 596-ի սկզբին):

Այս խռովութիւնները պէտք է երկարատեւ կռիւների պատճառաւ արեւելքում և արեւմուտքում արդէն իսկ բաւական տկարացած տէրութիւնը խիստ քայքայած լինէին: Խոսրով Բ. սակայն այն իմաստուն միապետը չէր, որին կարօտ էր երկիրն այս հանգամանքներում: Նա ամենից շատ, եթէ ասելու լինիք, մի սովորական արեւելեան իշխան էր: Իսկապէս տկար լինելով նա միանգամայն պարծենկոտ և երկշոտ էր, փարձամասիրութեան և շռայլութեան հետ նա ագահութիւն էլ ուներ: Նրա մահուան ժամանակ արքունի գանձարանը, որ ինքը դատարկ էր ստացել, լիքն էր, մինչ երկիրը պատերազմներից աղքատացել էր: Նրա փարմունքը իրեն թաղաւորեցնողների վերաբերութեամբ թերեւս կարելի է արգարացնել, եթէ հանգամանքներն աչքի առաջ ունենանք: Պատերազմում նա երբէք նշանաւոր չէ եղել: Նրա յաղթանակները իւր զօրավարներին են պատկանում: Հարկաւ նա երկար ժամանակ պաշտպանում էր քրիստոնեաներին, մինչև իսկ նրանց առաւելութիւն էր տալիս, նրանց համար եկեղեցիք էր շինում: Սրա պատճառն այն էր, որ հոռոմների օժանդակութիւնը և մատամբ էլ, ինչպէս ինքն էր կարծում, ասորիների և արաբների զլխաւոր սրբի, ս. Սարգսի, օգնականութիւնը մեծ ազդեցութիւն էր գործել նրա վրայ, մասամբ էլ իւր սիրու-

լի տիկնանց տիկին Շիրինի, որ մի ջերմեռանդն քրիստոնեայ էր, և այլոց, ինչպէս իր քրիստոնեայ անձնական թիշի Գարրիէլի: Աւերջին ժամանակները Խոսրովի առ քրիստոնեաներն ունեցած բարեհաճութիւնը հակասակի փոխուեցաւ: Մեզ յայտնի է, որ նա բնաւորութեամբ բոլորովին վայրենի էր:

Սկսած այն ժամանակից, երբ մի ապստամբութեան շնորհիւ Մօրիկ գահալքէժ եղաւ, սպանուեցաւ և նրա տեղը կայսերական գահը նստաւ զղուելի Փոկասը (նոյնմբ. 602), Խոսրովն իրեն պատերազմի մէջ էր համարում: հոռոմների հետ իրեն վրիժառու իւր «հայր» Մօրիկի և պաշտպան նրա կարծեցեալ Թագէոս որդուն, որ իրեն էր ապաւինել: Սրա վրայ աւելացաւ և այն, որ Եղիսիոյ հրամանատար նարսէսը նրան Փոկասի ընդդէմ օգնութեան կանչեց, Խոսրովը նախ հրամայեց բանտարկել այն զեապաններին, որոնց Փոկասն ուղարկել էր իւր գահակալութիւնը Խոսրովին յայտնելու: Պատերազմն սկսաւ հաւանօրէն 604-ին: Քսան տարի շարունակ ասպատակեցին պարսից զօրքերը հոռոմների երկիրն այնպէս, ինչպէս երբէք չէին արել, այն աստիճանի տէրութիւնը Փոկասի և Աւարների և այլ վայրենի ազգերի շնորհիւ քայքայուած էր: Դարան առնելուս Խոսրովն ևս ներկայ էր (604): 2 ապոս նա այլ ևս անձամբ չէր մասնակցում պատերազմներում: Մի քանի տարուց յետոյ պարսից բանակները մօտն Փոքր Ասիոյ խորքերը, նոյն իսկ մինչև Բագդէդն, Կ. Պոլսի դիմացը, Բայց որ պարսից տէրութեան զօրութիւնն այնքան էլ ամուր չէր, երևում է այս շրջանում (604-ի և 610-ի մէջ) տեղի ունեցած, ինքն ըստ ինքեան մի աննշան ի-

1. Շիրինն ու Թագաւորը նոյն իսկ քրիստոնեաների երկու դաւանութեանց, միաբնակների և նիստորականների, վէճերի մէջ խառնուեցան: Նրանց յիմարաբար պաշտպան կանգնեցին սակաւաթիւ եւ աւելի քիչ պարսկական միաբնակներին: Այս յարաբերութիւնների մասին ունինք մի ժամանակակից եւ դեռ չհրատարակած աւորական յիշատակարանի մէջ հիմնադր նկարագրեր: Այդ յիշատակարանից ես օգտուել եմ շնորհիւ Դր. Կոյնի, Յուլիոյէի և Էուգի Կուլոյի:

Ժ. Հ.

Այս մասին եւ առ հասարակ Խոսրով Բ.-ի պատմութեան համար առաջնակարգ աղբիւր է Սեբեոսը, որի բոլոր մանրամասն տեղեկութիւնները եթեւի յայտնի չեն եղել հեղինակին: Անշուշտ է, որ Սեբեոսի գեղմ. Թաղամանութիւնը այդ պատմագրի հեղինակութիւնը շատ պիտի բարձրացնէ գիտական աշխարհում: Մեր գրականութեան մէջ առհասարակ Սեբեոսի պատմութիւնը մի հազուագիւտ գանձ է իւր աղբիւրների ստուգութեամբ: Պարսից եւ հայոց պատմութեան համար Սեբեոս առաջնակարգ աղբիւր է, որ ցարդ ըստ արժանւոյն չէ գնահատուած:

Ժ. Թ.

1. Սեբեոս. Գիծք Բ. ԳԼ ԺԲ. Եր. 94. եւ ԳԼ ԺԵ. Եր. 98:

բողոքներին, այն է՝ Դու Բարի ճակատամարտն, Խոս-
րովը Հերայի թագաւորութիւնը վերջացրել էր և վեր-
ջին թագաւոր Նումանին սպանել էր առել: Այսու
տէրութիւնը ազատուել էր ինքն ըստ ինքեան մի ան-
յարմար աւատական իշխանութիւնից, սակայն աւե-
լի զգուշացել էր այժմ անապատի վայրերի ցեղե-
րի վրայ ազդեցութիւն գործելն և արգելել նրանց
ապագատակութիւնները մշակուած երկիրների վրայ:
Նումանի անկումից յետոյ Բեզուլին Բէկը իրն Այ-
լի ցեղին յաջողել էր Դու Բարցում, Եփրատի
մօտ, սակաւօրեայ ճանապարհով Տիգրոսից հեռու,
արքունի մի զօրաբանակ, որ բաղկացած էր արա-
ներից և պարսիկ կանոնաւոր զօրքից, բաւարովին ջար-
դելու և այն երկրին տիրանալու, որտեղից նրանց
ուզում էին հանել: Պարսիկների վրայ տարած այս
յաղթանակը որ արաբական ազգային փառասիրու-
թիւնը շատ մեծացրել է, բարձրացրեց մեծապէս նրանց
անձնավատահաւթիւնը, և ապագայում Իսլամի յար-
ձակման ժամանակ պարսից տէրութեան վրայ շատ
զօրացրեց:

Պատերազմը հոռոմների հետ յաջողութեամբ
շարունակուեց դեռ ևս երկար, երբ արի Հերակլը
Փոկասին գահալիժել էր արդէն (Հոկտ. 610): Սա
զուր տեղը քանիցս խաղաղութիւն խնդրեց, նեղուե-
լով ամէն կողմից: Դամասկոսն առնուեցաւ 613-ին,
Այն կողմերը, ուր տէրութեան հիմնարկութեան
օրուանից պարսիկները ոտք չէին կոխել, այնպէս
աւերուեցաւ, որ հետքերը մինչև այսօր էլ ան-
համար աւերակների վրայ երևում են: Երուսաղե-
մն առնուեցաւ 614-ի յունուարին: Ըմբողջ Քրիս-
տոնէութիւնը սոսկաց լսելով որ պատրիարքի հետ
միասին Փրկչի «վեհ», կենսատու խաչն» ևս զերի են
տարել պարսիկները: Արանից յետոյ առնուեցաւ
Եգիպտոսը և Փոքր Ասիան մինչև Քաղկեդոն աս-
պատակուեցաւ: Միայն 622-ին կարող եղաւ Հե-
րակլը պարսիկների դէմ կենդանու և նաև ուղի գիմեց
Խոսի ծովածոցը, այնտեղից մտաւ Հայաստան
և պոնտական երկիրներն և առաջին անգամ կրկին
բարգանք ազդեց թշնամուն հաղթական զէնքի ա-
պ: Երշաւանքի ծախքերի համար եկեղեցեաց
անձարաններից շատ զբաւ առնուեցաւ: Մարտի
15-ին 623 թ. ձեռնարկեց նաև վերջապէս իւր մեծ
արշաւանքը, որ նրան քանիցս պարսից երկրի խոր-
քերը տարաւ: Նրա գրեթէ արկածախնդրական
թափառումները, որոնց միջոցին նա սովորաբար
դէպի յետ հաղորդակցութիւն չէր ունենում և մեծ
գիւղարութիւնների պիտի հանգրիպէր, զօրքին պա-
շար մատակարարելու համար, ցոյց են տալիս, որ
նա մեծ զօրավար էր և մեծ քաղաքագետ: Հենց
առաջին տարումը նա աւերեց պարսիկների ամենա-

սուրբ սրբավայրերից մէկն, Գանձակի ատրուշանը:
Աւրոմիայի լճից ոչ հեռու. սա պատասխան էր Երու-
սաղեմի սրբազոյժութեան: Մենք տեսնում ենք Հե-
րակլին երբեմն Կովկասի մօտերը, երբեմն արեւե-
լեան Փոքր Ասիայում երբեմն Միջագետքում, ոչ
երբէք յաղթուած, յաճախ յաղթական, թերեւ
աւելի յաճախ էլ ճարպիկ շարժումներով զօրագոյն
բանակներ խաբելիս և տկարացնելիս: Խոսքովը,
որին կայսրը Գանձակում սարսափելի մերձեցել էր,
նրա ուշադրութիւնը մի կողմը քաշելու ուղարկեց
իւր ամենից անուանի զօրավար Հասար Բարադին
(Հասր Աւարադ) մեծ զօրաբանակով դէպի Քաղկե-
դոն (626): Այդ մի վտանգաւոր ժամանակ էր Կ.
Պօլեի համար. մի կողմում պարսիկներն էին, միւ-
սում Աւարները (626 ամառը), իսկ կայսրը գրեթէ
անհետ էր եղել խորին Ասիայում: Սակայն Աւար-
ները շուտով յետ քաշուեցան (օգոստոսի սկզբին),
որովհետեւ աննաւատրոմ պարսիկները չկարողա-
ցան նրանց հետ Վասիորի վրայով զինուորական միա-
բանութիւն հաստատել: Դրա փոխարէն Հերակլը Կով-
կասի հիւսիսից վայրենի խաղարների պարսից երկիրն
արձակեց: Միայն 627-ին համարձակուեց նա տե-
րութեան բուն կեդրոնի վրայ յարձակուելու: Ճրա-
գաւուցի տօնը (628 յունուար 6.) կատարեց նա
Դաստակերտում, որ 24 տարի Խոսքովի կա-
նոնաւոր մայրաքաղաքն էր: Տիգրոսից միայն մեր-
ձաւորապէս երեք օրուան ճանապարհ հեռու. Թա-
գաւորն երկիւղից փախել էր և ինքն ու իր կանա-
նոցը ապահով էր զգացել՝ միայն երբ անցել էր
Տիգրիսի կամուրջը Տիգրանում, Հերակլը իւր հօր
արշաւանքը Կովկասից հարկաւ փոքրամիւս գնդերով
էր արել և կարող չէր ջրանց քներով պաշտպանուած
և խիստ ամրացած մայրաքաղաքի վրայ յարձակուել:
Այլ ընդհանառաւ մինչև թագաւորի մի մեծ բա-
նակ կաղմելը յետ քաշուեց, բայց էլի դէպի թըշ-
նամու հողը, դէպի Գանձակ, և այն էլ փետրուա-
րին և մարտին շարունակ տեղացող ձիւնի տակ
Քուրդտանի լեռնաշղթայի միջով, մի ձեռնար-
կութիւն, որին նման պատերազմական պատմութեան
մէջ շատ քիչ կայ:

Այս միջոցին սակայն Տիգրանում նշանաւոր
իրողութիւն էր կատարուել: Խոսքովը իւր բռնակա-
լութեամբ և կոփումներով մեծամեծներին և հա-
սարակ մարդկանց առհասարակ դառնացրել էր, նրա
վատօրէն փախուստը պատճառ էր դարձել իւր
յարգանքը կորցնելու: Դրա վրայ աւելացաւ և այն,
որ նա Մարզանշահին, իւր սիրելի Շիրինի որդուն,
յաջորդ էր նշանակել, անգրանիկ Կաւատ որդուն
զրկելով, որովհետեւ Շիրինը, չնայելով իւր տարի-
քին և հազարաւոր այլ կանանց, դարձեալ իշ-

խում էր նրա վրայ, Կաւաթը իւր միւս շատ եղբայրների հետ արգելուած էր մի ամբողջում: Երգ մի քանիսը, դրանց մէջ և մի քրիստոնեայ Շամաթայ անուանով, որ որդի էր մեռած ընդհանուր կապալառու Եղգինի, ազատեցին Կաւաթին բանտից և թագաւոր հրատարակեցին (25-ին փետր. 628), Խոսրովը լքեալ ամէնքից՝ գուրս հանուեցաւ իւր թագստեան տեղից, բանտարկուեց և մի քանի օրից սպանուեց (29 փետ. 628):

Այսպէս անգլթօրէն և թշուառ կերպիւ ընկաւ այն մարդը, որի բանակները գրեթէ Աքեմենեան տէրութեան սահմաններին տիրել էին: Աչ մի ձեռք չբարձրացաւ նրան պաշտպանելու և նրա համար վրէժխնդիր լինելու: Մանաւանդ քրիստոնեաները, որ բոլոր միւս բաները մի կողմը թողնելով խաչի գերուելուն համար խորը խոցուած էին, ցնծութեան աղաղակներով ընդունեցին հայրասպան Կաւաթին, որի գահ բարձրանալու ժամանակ իրենցից մէկը մեծ գեր էր խաղացել:

Առաջին բանը, որ կատարեց Բ. Շէրոյէն իւր հօրն սպանելուց յետոյ արաւ, էր իւր բոլոր եղբայրների սպանումն (հաւանթօրէն 18), * իսկ երկրորդը՝ որ կայսեր մօտ մարդ ուղարկեց խաղաղութիւն աղերսելով: Ամիջապէս մի զինադադար հաստատուեցաւ, բայց ոչ խաղաղութիւն: Հերակլը չէր շտապում խաղաղութիւն անելու, որովհետեւ իրերի վիճակը մասամբ իւրիշ նրանից էր կախուած: Բոլոր պարսիկ գնդերն հրաման ստացան հռոմեաների երկրներից գուրս գալու: Ինչպէս երևում է, Հերակլն այս ձեռք կրկին ձեռք բերուած երկրներից մի քանիսի, մանաւանդ Միջագետքի, վիճակը մասամբ կարգի է բերել: Ասորիք հասնելով լսեց, որ Կաւաթ Շէրոյէն արդէն մեռել է, Խեղճը հազիւ կէս տարի էր թագաւորել: Սրա կառավարութիւնը նշանաւոր եղաւ մի սոսկալի ժանտախտով:

Երկրի զօրաւորները նրա փոխանակ թագաւոր կարգեցին նրա որդի Արտաշէի Գ.-ին: որ մի եօթնամեայ մանուկ էր: Երգ սկսաւ մի անասելի շփոթութեան ժամանակ, երբ գահի վրայի մանուկներն ու կանայք իրրեւ պատրուակ էին ծառայում միմեանց դէմ մաքառող մեծամեծների համար: Արտաշի թագաւորութեան միջոցին Հերակլը մեծահանգէս կերպիւ կրկին կանգնեց Երուսաղէմում՝ ս. խաչը, որ Տիգրոսից ուղարկել էին նրան Նեստորական եկեղեցու զխաւորներից մէկի ձեռքով: Դեռ ևս մինչև այսօր «Խաչվերացի» տօնը յիշեցնում է այդ հանդիսի օրը, 14-ին սեպտեմբերի (629-ին):

Տիգրոսի կառավարութիւնն անզօր էր: Խաղիւններն ասպատակելով արշաւում էին տէրութեան վրայ, Թերեւս այդ միջոցներին էր, որ Խոսրովը, * Կաւաթի որդին, Որմիդդ Դ-ի թոռն, որ թիւրքերի մօտ էր մեծացել, նախ Խորասանում փորձ արաւ իւր գահը կանգնելու: Նրան մի քանի ամից յետոյ սպանեցին:

Արգ, զօրաւորագոյն մէկը ձեռք մեկնեց դէպի թագը. դա էր յաղթութիւններով պսակուած Շամրվաւազը: Մի տեսակցութեան միջոցին Կապադովկիոյ Արարեստուտում (յուլիս 629) պէտք է նա Հերակլի հաճութիւնն առած լինի այդ մասին: ** Սրա համար ձեռնտու էր թշնամի տէրութիւնը, ներքին խռովութիւններին նպաստելով՝ ըստ կարելւոյն թուլացնել: Հաճութեամբ սակաւաթիւ գնդերով Տիգրոս հասաւ, տէրութեան յայտնի պաշտպանը առաւ իւր թագաւորների քաղաքը մի քանի մեծամեծների դաւաճանութեամբ: Քաղաքը յափշտակութեան, կոտորածի և ամէն տեսակ սարսափների մատուցաւ: Արտաշի մանուկը ապրիլի 27-ին 630 թ. սպանուեցաւ: Սակայն արդէն յուլիսի 9-ին ընկաւ Հաճութեամբ իւր բարձակիցների նախանձի և օրինապահական ձգտման շնորհիւ: Նրա գին փողոցներով քաջ տրուեցաւ, և աւանդութիւնը կոպիտ հեգնութեամբ է խօսում այն մարդու մասին, որ կամենում էր թագաւոր լինել և չէր կարող լինել, որովհետեւ օրինական արքունի տանից չէր:

(Կը շարունակուի.)

Ծ. Բ.

ԱՅՏՈՐԻ ԴՍՏԵՐ ԾՐԳԸ. *

Անտառներում քաղցած գայլեր
Թափառում են ոռնալով,
Թափառում են քաղցած գայլեր,
Զոհ են պտրում ոռնալով:
Քաջ հովիւներ, արթուն կապ՝
Չեր հօտերը կը ջնջեն.
Մօտ են նոքա, արթուն կապ՝
Քաջ հովիւներ, սպառազէն:
Այս օտարներն՝ ո՞վ են սոքա,
Ի՞նչ են ուզում մեզանից.

* Տես Սեբէոս Դիքը Գ. Գլ. ԻԸ. Խոսրով ուն յազգէ Սասանայ:

** Հմմտ. Սեբէոս Դիքը Գլ. ԻԸ: Ժ. Թ.

* Բասկեան աւանդութիւն, Արտիւրո Կամպիոնի:

* Սեբէոս Դիքը Գ. Գլ. ԻԸ. եւ սպանին զամենեանն ի միում ժամու արս յաւ: Ժ. Թ.